ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2022 թվականի թիվ 132-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 25-րդ հոդվածի 1-ին մասերով ու «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» թիվ 513-Ն որոշման պահանջները՝

ո ր ո շ ու մ ե մ.

ՀՀ Տավուշի մարզում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչ կազմակերպելու նպատակով հանձնարարել.

1. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի N1 և N2 տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին.

1) 2022 թվականի ամառային զորակոչն անցկացնել սահմանված կարգով 2022 թվականի ապրիլի 18-ից մինչև հուլիսի 31-ը ներառյալ հաստատված գրաֆիկով՝ ապահովելով նախատեսված թվաքանակը,

2) ժամկետային զինվորական ծառայության զորակոչից խուսափող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ նյութերը սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին:

2. ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչությանը.

1) ապահովել զորակոչիկների անվտանգ տեղափոխումը և հասարակական կարգի պահպանումը զորակոչային տեղամասում,

2) ապահովել մարզի տարածքում և մարզի տարածքից դուրս գտնվող զորակոչիկների որոնումները և նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամաս,

3) զորակոչի ընթացքում զորակոչիկներին փոխադրող ավտոբուսներին ուղեկցելու համար զորակոչային տեղամասին կցել ճանապարհային ոստիկանության անձնակազմեր:

3. ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը.

1) ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի N1 և N2 տարածքային ստորաբաժանումների հայտով զինակոչիկների ֆլյուրո /ռենտգեն/ զննում, սոնոգրաֆիկ հետազոտում և կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել մարզի առողջապահական համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութեր, ֆլյուրո /ռենտգեն/ ժապավեններ և երևակման նյութեր, ինչպես նաև իրականացնել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածման և զինված ուժեր ներթափանցման դեպքերի կանխարգելման անհրաժեշտ միջոցառումներ:

4. Մարզի համայնքների և կազմակերպությունների /անկախ կազմակերպական և իրավական ձևերից/ ղեկավարներին.

1) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակներն ստանալուց հետո նրանց նկատմամբ կիրառել աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներ և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին,

2) իրավասության սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության զորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի N1 և N2 տարածքային ստորաբաժանումներ:

5. Մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ զորակոչի ընթացքում ընդլայնել ռազմահայրենասիրական աշխատանքների լուսաբանումը ԶԼՄ-ների միջոցով:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ինձ:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

21.04.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ